ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի, 2021 թվականի N 2-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2021 թվականի հունվարի 15-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

    1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի գործունեության մասին ընկերության գործադիր տնօրենի հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին հարցը:
    2. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխման ենթակա լրացուցիչ բաժնետոսերի ձեռքբերման դիմաց վճարվող գույքի շուկայական արժեքը սահմանելու և լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնելու մասին հարցը:
    3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի շուկայական արժեքը սահմանելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

14 հունվարի, 2021 թվական
ք. Երևան